

387

3123

6-95

1919

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
КОММУНИСТИЧЕСКАЯ ПАРТИЯ АРМЕНИИ
6 № 6 № 6

3K23
E-95

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք.

Ն. ԼԵՆԻՆ

ԵՐՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼՆ
ՈՒ ԻՐ ՏԵՂԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԳԻՆԸ 1 Ր.

Ленин. Третий Интернационал и его место
в истории

В 2001

3K23
E-95



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՀՍԽՀ-Եզրադրված Գործունեության, կուսակ, Գեներալական Կոմիտեի.
ՄԱՍԿՎԱ—1919.



2010

3823
5-95
պ.

31707-42

ԵՐՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼՆ ՈՒ ԻՐ ԴԵՐԸ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ



5-70

14895-18

40511

893-42

Դաշնակից երկրների իմպերիալիստները բոկաղի են ենթարկում Ռուսիան և ձգտում են սաւեաական հանրապետութիւնը իրր վարակման մի բոյն՝ կարել ողջ կապիտալիստական աշխարհից: Սյդ մարզիկ, որ պարծենում են իրենց հիմնարկութիւնների «գեմոկրատիզմով», այն աստիճան կուրացած են իրենց ատելութեամբ զէպի սաւեաական հանրապետութիւնը, որ չեն նկատում, թէ իրենք իրենց ծիծաղելի են դարձնում: Երեւակայեցէք՝ այդ առաջաւոր, առաւելապէս քաղաքակիրթ և «գեմոկրատիկ» երկրները, որ մինչ ատամները սպառազինւած են, որ ռազմական տեսակէտից միահեծան կերպով իշխում են ողջ երկրագնդի վրայ, վախենում են իդէական վարակումից, որպէս կրակից, այն վարակումից, որը զալիս է աւերւած, սոյի մասնւած, յետամնաց և նրանց ասելով՝ կիսափայրենի մի երկրից: Նէնց միմիայն այս հակասութիւնը բաց է անում բոլոր երկրների աշխատաւոր մասսաների աչքերը և օգնում է Կլեմանսօի, Լօյդ-Ջորջի, Վիլսոնի և նրանց կառավարութիւնների նման իմպերիալիստների կեղծաւորութեան զիմակր պատուելու:

Բայց մեզ օգնում է ոչ միայն այն կուրացումը, որ առաջ է դալիս կապիտալիստների զէպի սաւեա-

ները ունեցած ատելութիւնից, այլ և նրանց փոխազարծ գզգզոցը, որ հարկադրում է նրանց իրար հօր փորելու:

Նրանք խօսք մէկ արած լռութեան կատարեալ դաւադրութիւն են կազմել, ամենից շատ փախսնալով, որ չլինի թէ սաւետական հանրապետութեան մասին ճիշտ տեղեկութիւններ կամ մանաւանդ նրա պաշտօնական դոկումենտները որեւէ կերպ տարածեն:

Սակայն Ֆրանսական բուրժուազիայի զլխաւոր օրգան «Փամանակ» („Le Temps“) թերթը տպագրել է այն լուրը—թէ Մոսկւայում կազմւել է 3-րդ ինտերնացիոնալը:

Մենք Ֆրանսական բուրժուազիայի զլխաւոր օրգանին, Ֆրանսական շովինիզմի և իմպերիալիզմի այդ առաջնորդին, այդ բանի համար, չախտում ենք մեր յարգալիր շնորհակալութիւնը: Մենք պատրաստ ենք ուղարկելու «Փամանակ» լրագրին մի հանդիսաւոր ուղերձ ի նշան մեր երախտագիտութեան, որ նա այդպէս յաջող և հմուտ կերպով մեզ օգնում է: Այն բանից, թէ հիմնւելով մեր տւած ռազիօի վրայ ի՞նչ ձեով է կազմել իր տւած տեղեկութիւնը «Փամանակ» թերթը՝ շատ պարզ երևում է, թէ ի՞նչ մօտիվներով է ղեկավարւել փողային մեշոնի այդ օրգանը: Նա ուղեցել է կծել Վիլսոնին, խայթել նրան—ասելով թէ—տեսէ՛ք, ի՞նչ մարդիկ են նրանք, ո՞ւ մ հետ դուք թողատրում էք բանակցել:

Փողային մեշոնի պատուէրով գրող իմաստունները չեն էլ նկատում, թէ ինչպէս նրանք Վիլսոնին ահա ասլով բոլշևիկներին նկատմամբ՝ միևնոյն ժամանակ այդ մի ռեկլամ է դառնում յօդուտ բոլշևիկներին՝ աշխատաւոր մասսաների աչքում: Մի անգամ ևս՝ մեր

ակնածալիր շնորհակալութիւնը Ֆրանսական միլիոնատերերի օրգանին:

Երրորդ ինտերնացիոնալի հիմնադրումը կատարւել է համաշխարհային այնպիսի պայմաններում, որ ոչ մի արգելք, դաշնակից իմպերիալիստների կամ Գերմանիայում Շալդեմանի նման, Աւստրիայում Ռենների նման կապիտալիզմի լակէյների և ոչ մի մանր ու չնչին խորամանկութիւն 3-րդ ինտերնացիոնալի հաստատման լուրը տարածւելուն և ողջ աշխարհի բանւոր դասակարգի դէպի նա ունեցած համակրութեան խոչնդոտ հանդիսանալ չի կարող: Այդ պայմաններն ստեղծել են ամենուրեք բացարձակ կերպով ոչ թէ օր առ օր, այլ ժամ առ ժամ աճող պրոլետարական լեղափոխութիւնը: Այդ պայմաններն ստեղծել են աշխատաւոր մասսաներին մէջ սաւետական շարժումը, որն այնպիսի թափ է ստացել, որ իրօք դարձել է միջազգային:

Առաջին ինտերնացիոնալը (1864—1872) հիմք է դրել բանւորների միջազգային կազմակերպութեան, պատրաստելով նրանց լեղափոխական գրոհ տալու կապիտալի վրայ: Երկրորդ ինտերնացիոնալը (1889—1914) պրոլետարական շարժման միջազգային կազմակերպութիւնն էր, որի աճումը դէպի լաչնքսը գնաց, մի բան, որ չէր կարող ժամանակաւոր կերպով չիչեցնել լեղափոխական մակարդակի բարձրութիւնը, ժամանակաւոր կերպով չուժեղացնել օպորտիւնիզմը, որ վերջ ի վերջոյ անարգ տապալման հասցրեց այդ ինտերնացիոնալը:

Երրորդ ինտերնացիոնալը փաստօրէն ստեղծւեց 1918 թւին, երբ օպորտիւնիզմի և սոցիալ-շովինիզմի դէմ, մանաւանդ պատերազմի ժամանակ մղւած պայ-

քարի պրոցեսը, կոմունիստական կուսակցութիւնների կազմակերպում առաջ բերեց մի շարք ազգերի մէջ: Ձեականօրէն Յ-րդ ինտերնացիօնալը հիմնւել է իր առանձին համագումարում, Մոսկւա, 1919 թւի մարտին:

Եւ այդ Յ-րդ ինտերնացիօնալի ամենաբնորոշ գիծն այն էր, որ նա կոչւած էր իրագործելու, կեանքի մէջ մտցնելու մարքսիզմի աւանդները և իրականացնելու սոցիալիզմի և բանւորական շարժման դարաւոր իդէալները:

Երրորդ ինտերնացիօնալի այդ ամենաբնորոշ գիծն արտայայտեց նրանում, որ «բանւորների միջազգային նոր, երրորդ ընկերութիւնը» այժմ արդէն սկսել էր որոշ չափով ներդաշնակել—սաւեատական սոցիալիստական հանրապետութիւնների դաշնակցութեան:

Առաջին ինտերնացիօնալը պրոլետարական միջազգային յանուն սոցիալիզմի մղող պայքարի հիմքը դրեց:

Երկրորդ ինտերնացիօնալը մի շարք երկրներում մասսայականօրէն լայն ժաւալով շարժման մի պատրաստական շրջան էր:

Երրորդ ինտերնացիօնալը իւրացրեց երկրորդ ինտերնացիօնալի պտուղները՝ կտրելով ու դէն շարտելով նրա օպորտունիստական, մանր-բուրժուական, սոցիալ-շովինիստական արատը և սկսեց իրականացնել պրոլետարիատի դիկտատուրան:

Աշխարհում ամենից չեղափոխական շարժումը, այսինքն, պրոլետարիատի դէպի կապիտալի խորտակումը տանող շարժումը դեկավրող կուսակցութիւնների դաշնակցութիւնը, այժմ ամենահաստատ

աուն բազի վրայ է կանգնած ու մի քանի սաւեատական հանրապետութիւններ, որոնք միջազգային մասշտաբով մարմնացնում են կեանքում պրոլետարիատի դիկտատուրան, նրա կապիտալիզմի վրայ տարած յաղթանակը:

Երրորդ կոմունիստական ինտերնացիօնալի համաշխարհային—պատմական նշանակութիւնը կայանում է այն բանում, որ նա սկսեց կեանքում իրագործել Մարքսի մեծագոյն լոզունգը, այն լոզունգը, որ հաշւէյարդար է կատարում սոցիալիզմի և բանւորական շարժման դարաւոր զարգացման, որն արտայայտւում է պրոլետարիատի դիկտատուրա հասկացողութեան մէջ:

Այդ հանճարեղ նախագուշակումը, այդ հանճարեղ թէօրիան իրականութիւն է դառնում: Լատինական այդ խօսքերը թարգմանւած են այժմ ժամանակակից Եւրոպայի բոլոր ժողովրդական լեզուներով, դա դեռ քիչ է՝ աշխարհիս բոլոր լեզուներով:

Սկսւել է համաշխարհային պատմութեան մի նոր դարաշրջան:

Մարդկութիւնն թօթափում է իր վրայից ստրկութեան վերջին ձևը՝ կապիտալիստական, կամ վարձու ստրկութիւնը:

Աղատւելով ստրկութիւնից՝ մարդկութիւնն առաջին անգամն է, որ անցնում է դէպի իսկական ազատութիւն:

Ի՞նչպէս պատահեց, որ առաջին երկիրը, որը իրականացրեց պրոլետարիատի դիկտատուրան և սաւեատական հանրապետութիւն կազմակերպեց՝ դա Եւրոպայի ամենալետամնաց երկրներից միսն էր: Մենք սխալւած չենք լինի, եթէ ասենք, որ հէնց այն հա-

կասութիւնը, որ կայ Ռուսիայի յետամնացութեան ու նրա ղէպի ղեմնկրատիզմի բարձրագոյն ձևն արած «Թռիչքի» միջև, բուրժուական ղեմնկրատիայի վրայից ղէպի սաւետական, պրոլետարական ղեմնկրատիան, հէնց այդ հակասութիւնն էր այն պատնառներից մէկը, (բացի սոցիալիզմի առաջնորդների մեծամասնութեան հնշող օպորտունիստական սովորութիւններից և Ֆիլիստերական նախապաշարումներից) որ առանձնապէս ղժւարացրեց ու դանդաղեցրեց սաւետների գերի ըմբռնումն Արևմուտքում:

Բանւորական մասսաները, ողջ աշխարհում, բրնագոյով ըմբռնեցին սաւետների նշանակութիւնը, իրրև պրոլետարական պայքարի գործիքների, իբրև պրոլետարական պետութեան մի կուրի Բայց օպորտունիզմից փչացած «առաջնորդները» շարունակում էին և շարունակում են աղօթել բուրժուական ղեմնկրատիային, այն «առհասարակ ղեմնկրատիա» անւանելով:

Զարմանալի է, որ պրոլետարիատի ղիկատառւրայի իրականացումը ցուցահանեց նախ և առաջ Ռուսիայի «յետամնացութեան» և նրա բուրժուական ղեմնկրատիայի վրայով արած «Թռիչքի» հակասութիւնը: Զարմանալի կլինէր, եթէ ղեմնկրատիայի նոր ձեի իրականացումը պատմութիւնն տար մեզ առանց մի շարք հակասութիւնների:

Ամեն մի մարքսիստ, նոյնիսկ ժամանանակակից գիտութեան ժանօթ առհասարակ ամեն մի մարդ, եթէ նրան հարց տան, թէ հաւանակա՞ն է արդեօք տարբեր կապիտալիստական երկրների համաչափ կամ ներդաշնակ-համաչափ փոխանցումը ղէպի պրոլետարիատի ղիկատառւրան. այս հարցին անպայման բացասական պատասխան կտայ:

Ոչ համահաւասարութիւն, ոչ համաչափութիւն, ոչ ներդաշնակութիւն կապիտալիզմի աշխարհում երբէք չի եղել և չէ կարող լինել:

Ամեն մի երկիր առաւելապէս ցայտուն կերպով զարգացրել է կապիտալիզմի և բանւորական շարժման մի կամ միւս, այս կամ այն յատկութիւնը, ղիժը կամ ղժերի շարքը: Զարգացման պրոցեսը համաչափ չի ընթացել:

Երբոր Փրանսիան իր մեծ բուրժուական յեղափոխութիւնն էր կատարում, պատմականօրէն նոր կեանքի համար արթնացնելով Եւրոպայի ողջ ցամաքը, Անգլիան հակա-յեղափոխական կօալիցիայի ղրլուխն էր անցած, միաժամանակ կապիտալիստական տեսակէտից լինելով աւելի զարգացած քան Փրանսիան:

Իսկ այն շրջանի անգլիական բանւորական շարժումը հանճարեղ կերպով սպազալ մարքսիզմի շատ ու շատ բաների նախագուշակն է հանդիսանում:

Երբոր Անգլիան աշխարհին տւեց առաջին լայն, իրօք մասսայական, քաղաքականօրէն ձևաւորւած, պրոլետարօրէն յեղափոխական շարժումը՝ Զարտիզմը՝ Եւրոպայի ցամաքի վրայ մեծ մասամբ թօլլ բուրժուական յեղափոխութիւններ էին կատարւում, իսկ Փրանսիայում բռնկեց առաջին մեծ քաղաքացիական կռիւր պրոլետարիատի և բուրժուալիայի միջև: Բուրժուալիան մէկ-մէկ և տարբեր երկրներում, տարբեր կերպով յաղթահարեց պրոլետարիատի ղանաղան ազգային ղօրագնդերը:

Անգլիան օրինակ է տւել մի երկրի, ուր ըստ էնգէլսի արտայայտութեան, բուրժուալիան, բուրժուացած արիստոկրատիայի հետ միասին ստեղծել է

պրոլետարիատի առաւելագէտ բուրժուացած վերնաշարերը:

Առաջաւոր կապիտալիստական երկիրը մի քանի տասնեակ տարով յետամնաց հանդիսացաւ պրոլետարիատի չեղափոխական պայքարի իմաստով: Փրանսիան ասես թէ հատցրել էր պրոլետարիատի ուժերը երկու հերոսական համաշխարհային պատմական պրոլետարիատի՝ ընդդէմ բուրժուազիայի՝ ապստամբութեան տեսակէտից 1848 և 1871 թւականներին:

Ապա, XIX դարի 70-ական թւականներից սկսած բանւորական շարժման հեղեմոնիան ինտերնացիոնալում Գերմանիային անցաւ, երբ Գերմանիան տնտեսապէս աւելի յետ էր, քան Անգլիան ու Փրանսիան: Իսկ երբ Գերմանիան տնտեսապէս այդ երկու երկրներից առաջ անցաւ, այսինքն XX-րդ դարի երկրորդ տասնամեակին, այն ժամանակ Գերմանիայի համաշխարհային օրինակելի մարքսիստական բանւորական կուսակցութեան դուրս անցած՝ հանդիսացաւ զաղիր խարեբանների մի խմբակ, կապիտալիստներին վաճառւած ամենակեղտոտ զարշէլիների մի խմբակ՝ սկսած Շայդեմանից ու Նոսկէից մինչև Իւլիթն ու Լեզիներ, բանւորների ամենազաղիր դահիճների, որոնք ծառայութեան էին մտել միապետութեան և հակաչեղափոխական բուրժուազիայի մօտ:

Համաշխարհային պատմութիւնն անշեղ գնում է դէպի պրոլետարիատի դիկտատուրան, սակայն ոչ հարթ ու հաւասար, ուղիղ ու պարզ ուղիներով:

Երբոր Գարլ Կառլցկին դեռ ևս մարքսիստ էր և ոչ մարքսիզմի ռենեգատ, որպիսին հանդիսացաւ նա իբր մարտիկ յանուն համերաշխութեան Շայդեմանի հետ և յանուն բուրժուական դեմոկրատիայի

մնդդէմ պրոլետարիան կամ սաւետական դեմոկրատիայի, ահա այն ժամանակ, XX-րդ դարի հէնց սկզբում նա գրում էր «Սլաւոններն ու յեղափոխութիւնը» վերնազիր կրող մի յօդուած: Այդ յօդուածում նա շարադրում էր այն պատմական պայմանները, որոնք նախադժու էին միջազգային և չեղափոխական շարժման հեղեմոնիայի սլաւոնների ձեռքն անցնելու հնարաւորութիւնը:

Այդպէս էլ դուրս եկաւ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ժամանակաւորապէս, կարճ ժամանակով չեղափոխական պրոլետարիան ինտերնացիոնալում հեղեմոնիան ռուսների ձեռքն անցաւ, ինչպէս որ XIX-րդ դարի տարրեր շրջաններում անգլիացիների, ապա ֆրանսիացիների և յետոյ գերմանացիների ձեռքումն է եղել:

Ես արդէն քանիցս առիթ էմ ունեցել ասելու, որ առաջաւոր երկրների հետ համեմատած՝ ռուսներն աւելի հեշտութեամբ կարող էին սկսել մեծ պրոլետարիան չեղափոխութիւնը, բայց նրանց համար աւելի դժւար պիտի լինի շարունակել այն և վերջնական յաղթանակին հասցնել սոցիալիստական հասարակութեան կատարեալ կազմակերպման իմաստով:

Մեզ համար աւելի հեշտ էր սկսել նախ՝ նրա համար, որ ցարական միապետութեան XX-րդ դարի Ն. րոպայի տեսակէտով քաղաքական յետամնացութիւնը առաջ էր բերում մասսաների չեղափոխական զրոհի արտակարգ հզօրութիւն: Երկրորդը Ռուսիայի յետամնացութիւնը իւրօրինակ կերպով ի մի է ձուլել պրոլետարիան չեղափոխութիւնն՝ ընդդէմ բուրժուազիայի և գիւղացիականն ընդդէմ հողատէրերի: Մենք դրանով սկսեցինք 1917 թւի հոկտեմբերին և

այն ժամանակ մենք այնպիսի հեշտութեամբ չէինք յաղթանակի, եթէ դրանով չսխեղինք: Մարքսը դեռ 1856 թիւն Պրուսիայի մասին խօսելիս, մատնանիչ է արել զիւղացիական պատերազմի և պրոլետարական չեղափոխութեան իւրօրինակ միացման հնարաւորութիւնը: 1905 թիւ սկզբում բոլշեիկները պաշտպանում էին պրոլետարիատի և զիւղացիութեան չեղափոխական դեմոկրատիկ զիկտատուրայի զաղափարը: Երրորդ՝ 1905 թ. չեղափոխութիւնը՝ չափից դուրս շատ բան է արել զիւղացիական ու բանւորական մասսաների քաղաքական ուսուցման համար թէ նրանց աւանգարտը Եւրոպայի սօցիալիզմի «վերջին խօսքին» ծանօթացնելու, թէ մասսաների չեղափոխական գործողութեան իմաստով: Առանց այդպիսի մի «վերջնական խօսքի», որպիսին էր 1905 թիւը, 1917 թիւ թէ փետրուարեան բուրժուական չեղափոխութիւնը, թէ հոկտեմբերեան պրոլետարականը անհնար պիտի լինէին: Զորրորդ՝ Ռուսիայի աշխարհազրական պայմանները թող էին տալիս նրան դիմանալու առաջաւոր կապիտալիստական երկրների արտաքին զերակրչուութեան հանդէպ աւելի երկար ժամանակ, քան կարող էր դիմանալ մի այլ երկիր:

Հինգերորդ՝ պրոլետարիատի և զիւղացիութեան իւրօրինակ փոխ-յարարերութիւնը հեշտացնում էր փոխանցումը բուրժուական չեղափոխութիւնից դէպի սօցիալիստականը, հեշտացնում էր քաղաքի պրոլետարների ազդեցութիւնը կիսապրոլետարական և աւելի չքաւոր զիւղական աշխատաւորների վրայ: Վեցերորդ՝ երկարատե գործազուլային պայքարի և եւրոպական մասսայական բանւորական շարժման փորձը խոր և արագօրէն սուր կերպարանք ստացող չեղա-

փոխական սիտուացիայի շրջանում հեշտացրեց այն իւրօրինակ պրոլետարական չեղափոխական կազմակերպութեան ձևը, որպիսին են սաւետները:

Սյս ամփոփումը լիակատար չէ, սակայն առայժմ սրանով կարելի է բււականանալ:

Սաւետական կամ պրոլետարական դեմոկրատիան ծնւեց Ռուսիայում: Պարիզի Կոմմունայի հետ համեմատած՝ արւած է երկրորդ համաշխարհային-պատմական քալը:

Գիւղացիա-պրոլետարական սաւետական հանրապետութիւնը, առաջին կայուն հանրապետութիւնը հանդիսացաւ աշխարհում: Նա արդէն չի կարող մեռնել իբր պետութեան նոր ձև: Նա այժմ արդէն մեռնակ չի կանգնած:

Սօցիալիզմի շինարարութեան աշխատանքը տանելու և նրան իր փախնանին հասցնելու համար շատ ու շատ բան է հարկաւոր: Աւելի քաղաքակիրթ երկրների սաւետական հանրապետութիւնները, ուր պրոլետարիատն աւելի կշիռ ու ազդեցութիւն ունի, մեծ շանսեր ունեն Ռուսիայից առաջ անցնելու, եթէ նրանք պրոլետարական զիկտատուրայի ուղին բռնեն:

Սնանկացած երկրորդ ինտերնացիոնալը այժմ մեռնում է և դեռ կենդանութեան ժամանակ տարբարուծւում: Փաստօրէն նա միջազգային բուրժուազիայի ծառայի դերն է կատարում: Դա իսկական դեղին ինտերնացիոնալ է: Նրա խօշորագոյն գազափարահան առաջնորդները, ինչպէս օրինակ, Կաուցկին, փառաբանում են բուրժուական դեմոկրատիան՝ անւանելով այն «առհասարակ դեմոկրատիա» կամ որ աւելի ևս անմիտ և կոպիտ մի բան է՝ «մաքուր դեմոկրատիա»:

Բուրժուական դեմոկրատիայի ժամանակն անցել է, ինչպէս անցել է և երկրորդ ինտերնացիոնալի ժամանակը, այն ինտերնացիոնալի, որը պատմականորէն անհրաժեշտ ու օգտակէտ գործ էր կատարում, երբ հերթական էր բանւորական մասսաներին բուրժուական դեմոկրատիայի շրջանակներում պատրաստելու խնդիրը:

Ամենադեմոկրատիկ բուրժուական հանրապետութիւնը բնաւ չի եղել և չէր էլ կարող լինել այլինչ, եթէ ոչ աշխատաւորներին կապիտալին հպատակեցնելու համար մի մեքենայ, կապիտալի քաղաքական իշխանութեան մի գործիք, բուրժուալիայի դիկտատուրա: Դեմոկրատիկ բուրժուական հանրապետութիւնը իշխանութիւն էր խոստանում մեծամասնութեանը, յայտարարում էր այդ, բայց երբէք չէր կարող իրագործել այդ՝ քանի գոյութիւն ունէր հողի և արտագրութեան այլ միջոցներ, մասնաւոր սեփականութիւնը:

Ազատութիւնը բուրժուական-դեմոկրատիկ հանրապետութեան մէջ իրօք հարուստների ազատութիւն էր: Պրոլետարներն ու աշխատաւոր զիւղացիները կարող էին և պէտք է օգտագործէին այն իրենց ոչ ժերը պատրաստելու համար, որպէսզի խորտակեն կապիտալը, որպէսզի յաղթահարեն բուրժուական դեմոկրատիան, սակայն փաստօրէն օգտուել դեմոկրատիայից կապիտալիզմի շրջանում աշխատաւոր մասսաները, ըստ ընդհանուր կանոնի, չէին կարող:

Աշխարհում առաջին անգամ սաւեական կամ պրոլետարական դեմոկրատիան ստեղծեց դեմոկրատիա մասսաների համար, աշխատաւորներին համար, բանւորներին և մանր զիւղացիներին համար:

Աշխարհում դեռ երբէք չի եղել բնակչութեան մեծամասնութեան պետական իշխանութիւն, այդ մեծամասնութեան այնպիսի իրական իշխանութիւն, որպիսին է սաւեական իշխանութիւնը:

Նա ճնշում է կեղեքիչների և նրանց օգնականների («ազատութիւնը»), նա խլում է նրանցից կեղեքելու («ազատութիւնը») ու բիշների սոված լինելուց օգտուելու («ազատութիւնը»), կապիտալի իշխանութիւնը վերականգնելու համար պայքար մղելու («ազատութիւնը»), ընդդէմ հայրենի բանւորների և զիւղացիների օտարերկրեայ բուրժուազիայի հետ դաշնադրելու («ազատութիւնը»):

Թող կաուցիլները պաշտպանեն այդպիսի ազատութիւն: Դրա համար պէտք է մարքսիզմի ռենեզատ, սոցիալիզմի ռենեզատ լինել:

Այ մի բանում II ինտերնացիոնալի առաջնորդների սնանկացումը, այնպիսի առաջնորդների, որպիսիք են Գիլֆերտինգը և Կաուցիլին, չի արտապայտուել այնքան ցայտուն կերպով, ինչպէս նրանց սաւեական կամ պրոլետարական դեմոկրատիայի նշանակութիւնն ըմբռնելու անընդունակութեան մէջ, նրանց վերաբերմունքում դէպի Պարիզի կոմմունան ու իր պատմական տեղը, իր անհրաժեշտութիւնը որպէս պրոլետարական դիկտատուրայի մի մեկ:

«Անկախ» (կարգա՝ քաղքենական, մանր-բուրժուական, ֆիլիստերական) զերմանական սոցիալ-դեմոկրատիայի օրգան «Ազատութիւն» (Die Freiheit) թերթի 74-րդ №-ում 1919 թ. փետրւարի 11-ին գետեղւած է Գերմանիայի չեզափոխական պրոլետարիատին «ուղղւած» մի կոչ:

Այդ կոչն ստորադրել է կուսակցութեան վար-

չութիւնն ու կուսակցութեան գերմանական չիմնադիրի, գերմանական Ազգային համագործակցող Ֆրակցիան:

Այդ կոչը մեղադրում է Շայդեմաններին խորհուրդները վերացնելու ձգտման մէջ և առաջարկում է (կատակ չանէք) ներդաշնակել սաւեաների և չիմնադիրի գործունէութիւնը, սաւեաններին որոշ պետական իրաւունքներ տալ, որոշ սեղ տալ սահմանադրութեան մէջ:

Նաշտեցնել, միացնել բուրժուազիայի զիկտատուրան ու պրոլետարիատի զիկտատուրան: Որքան պարզ բան. որքան հանճարեղ Ֆիլիստերական զազախար...:

Միայն թէ ախոս, որ Կերենսիու օրով Ռուսաստանում այդ փորձել են միացնել մենշեիկներն ու սոցիալիստ չեղափոխականները, այդ մանր բուրժուական դեմոկրատները, որ իրենց սոցիալիստ են երեւիացում:

Այլ որ Մարքսը կարգալով չի բմբռնել, որ կապիտալիստական հասարակութեան մէջ, ամեն մի սուբմոմենտում, զատակարգելով ամեն մի լուրջ ընդհարման միջոցին հնարաւոր է կամ բուրժուազիայի զիկտատուրա կամ պրոլետարիատի զիկտատուրա՝ նա ոչինչ չի բմբռնել ոչ Մարքսի անտեսական ոչ էլ նրա քաղաքական ուսմունքից:

Սակայն Գիլֆերտինգի, Կաուցիու և ընկ. հանճարեղ - Ֆիլիստերական զազախարը բուրժուազիայի և պրոլետարիատի զիկտատուրայի խաղաղ միացման մասին՝ առանձին քննութեան է կարօտ, եթէ կամենանք անթերի թողնել այդ քննութիւնը և բաց անել անտեսական ու քաղաքական անհեթեթութիւնները, որոնցով լի է այդ նշանաւոր ու ծայր աստիճան կոմիքսիան փեարաք 11-ի կոչը: Ստիպւա՞ ենք չեստածղել այդ մի ուրիշ անձանց:



2013

« Ազգային գրադարան »
NL0033116

